ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4001-Ա « 06» դեկտեմբերի 2023թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ
ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի կողմից 08.11.2023 թվականին հայտարարված ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/3 ծածկագրով Երևան քաղաքի ենթակայության մանկապարտեզների կարիքների համար կենտրոնացված կարգով սննդամթերքի ձեռքբերման ընթացակարգին հայտ ներկայացրած «ՍՈՍ ՀԱՅԿԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ԱՁ-ն և «Հայկազունք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակիցներ) խախտել են գնման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունները, այն է՝ «ՍՈՍ ՀԱՅԿԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ԱՁ-ի կողմից գնման հայտով ներկայացված թիվ 1 հավելվածում նշված չի եղել հեռախոսահամարը, հավելվածը հաստատված չի եղել էլեկտրոնային ստորագրությամբ, ինչպես նաև թիվ 1.1 հավելվածով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը լրացված չի եղել, այդ թվում՝ ապրանքների տեխնիկական բնութագրերը, «Հայկազունք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից գնման հայտով ներկայացված թիվ 1.1 հավելվածի ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրերում նշված է եղել «կամ համարժեք» հղումը: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 23.11.2023 թվականին Մասնակիցներին ծանուցվել է հրավերով սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Մասնակիցների կողմից սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել:

Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի հ.526-Ն որոշմամբ սահմանված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 42-րդ կետով՝ Մասնակիցների հայտերը գնահատել է անբավարար և մերժել է:

Գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգը 2, 4, 9, 12, 15, 18, 22, 24, 33, 35, 36, 40, 41, 44, 46, 50 չափաբաժինների մասով հայտարարել է չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի:

Ընթացակարգի չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը 29.11.2023թ. հրապարակվել է տեղեկագրում:

Ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով.

1. «Հայկազունք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և «ՍՈՍ ՀԱՅԿԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ԱՁ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի վրա:

3.Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ